Իսկ եթե այնու գԱստուած պատճառ չարեաց կամիցին ասել, անկանին յիմաստնարար խորհրդոյ: Եթե գնորա ինչ հանեալ էր, եւ մարդոյն շնորհեալ, թերեւս յիրաւի պատճառ չարեաց կարծէր տուիչն. ապա եթե գնա նոյնպէս որպէս եղեւն պահեաց, եւ գնարդն այսպէս կամեցաւ առնել, պատճառ չարեաց՝ նախանձորդն է: Քանզի ոչ եթե յորժամ իցեն ուրուք երկու ծառայք, եւ գմինն ի ծառայութեան ունիցի, եւ գմիւսն յորդեգիրս գրիցէ, եւ միոյն յարուցեալ ի վերայ գմիւսն սպանանիցէ, պատճառ չարեաց գտէրն պարտ ի[46]ցէ իմանալ, որ ոչ եհան ինչ ի ծառայէն եւ շնորհեաց միտումն:

[ԺԲ]

Արդ եւ գայն եւս հարցանեն, եթե չար ինչ չկայր առաջի, ուստի՞ աւճն գոր սատանայ կոչէք՝ ինացաւ զհանգամանս չարին:

47 Ասենք՝ եթե սատանայ չար գտնուեալ մարդոյն Աստուծոյ ինացաւ, վասն որոյ գմարդն յայն յաւժարեցոյց: Որպէս յորժամ իցէ որ 207v ուրուք թշնամի, եւ թարուցեալ զթշնամութիւնն՝ զաղտ կամիցի վնասել, եւ չգիտիցէ զհանգամանս վնասակարութեանն, եւ շուրջ եկեալ յաժիցի հնարս խնդրել. ապա գտեալ ժամանակ՝ յորժամ որ ի բժշկաց թշնամոյն նորա պատուէր տայցէ յայս ինչ չհպել, եւ յայս նիշ կերակրոց չճաշակել, որով առողջութեանն կարիցէ հասանել, եւ նորա լուեալ՝ վաղվաղակի ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ զբժիշկն պարսաւիցէ, եւ զաւգտակարսն նմա վնասակարս թելադրեալ կարծեցուցանիցէ, եւ հակառակ պատուէրս հրամանաց [47] բժշկին տայցէ, եւ այնու առնիցէ նմա վնաս. որ ոչ եթե յառաջագոյն գիտէր զհանգամանս վնասակարութեանն, այլ ի պատուիրելոյ բժշկին գտեալ հնարս՝ եղէւ վնասակար. նոյնպէս կարծի եւ զսատանայէ՝ նախանձել նմա ընդ նախաստեղծ մարդոյն, եւ չգիտել զհանգամանս վնասակարութեանն. քանզի ոչ եթե չար ինչ առաջի կայր՝ ուստի զհանգամանսն մ208րարթ էր առնուլ, ուսեալ յԱստուծոյ պատուիրանէն՝ որ մարդոյն տուաւ արգելուլ գնա ի ճաշակելոյ ի տնկոյ իմեքէ ի մահաբերէ. որ ոչ եթե անպիտան ինչ ի կերակուրս մարդոյ էր, եւ ոչ բնութեամբ տունկն մահաբեր, եւ վասն այնորիկ ինչ արգելաւ մարդն ի ճաշակելոյ ինչ ի նմանէ, այլ անսաստութիւնն եղէւ պատճառ մահուան մարդոյն, իբրեւ յանցաւորի՝ որ անցանիցէ զհրամանաւ հրամանատուի՝ որ նմա կարգեալ իցէ:

Արդ ժտեցոյց թշնամին գմարդն [48] անցանել զհրամանաւն Աստուծոյ, որպէս զի ոչ եթե ստուգեալ գիտէր՝ եթե այնու նմա վնաս ինչ գործել կարիցէ, այլ կարծեալք, ի թեթուս մատուցեալ, եթե լիցի՞ եւ թե չլինիցի՞. եւ յետոյ յԱստուծոյ պատուիասէն՝ որ առ մարդն եղէւ վասն պատուիրանագանցութեանն ինացաւ եթե պատուիրանք նորա մահ գործեցին, եւ յիրաւի պատժեցան եւ նա եւ մարդն՝ գոր յաւժարեցոյց յանսաստութիւնն, ճաշակել ի փայտէն՝ որ ոչ բնութեամբ մահաբեր էր, այլ յԱստուծոյ սպառնալեացն եղէւ այն208vպիսի իրաց պատճառ:

Եւ որպէս բժշկի ոչ կարենք մեղադիր լինել՝ վասն յառաջագոյնն զգուշացուցանելոյ որով արիւնակաւ կարիցէ մարդն առողջանալ. եւ նորա թողեալ զպատուէրս բժշկին՝ անսայցէ թշնամոյն՝ որ զվնասարար խրատսն տայցէ նմա, որով ոչ զպատճառս վնասուն ի բժշկէն՝ որ յառաջագոյնն գուշակեաց նմա՝ իմանալի է, այլ ի թշնամոյն՝ որ ի [49] պատուիրանէ բժշկին նմա զվնասն հնարեցաւ. նոյնպէս եւ զսատանայէ ասենք լեալ թշնամի մարդկան՝ որ չեւ եւս գիտէր զհանգամանս չարեաց, այլ ի պատուիրանէն Աստուծոյ ուսեալ՝ կամեցաւ վնասել մարդոյն, զի եթե առանց Աստուծոյ կամաց ի ծառոյն ճաշակիցէ՝ առնուցու պատիժ գմահ: Քանզի թե յառաջագոյն չէր գուշակեալ Աստուծոյ մարդոյն չուտել ի կերակրոյ ծառոյն, եւ նորա յանգէտս կերեալ, չլինէր նմա պատիժ մահ. կամ որպէս թե առ ի չգիտանս եկեր, կամ որպէս թե առ չժուժալոյ ի կերակրոյ ծառոյն, չէր ինչ պատժի պարտական: Քանզի եւ մանուկ կաթնակեր՝ որ յայլ ինչ կերակուր մ209րտաբերիցէ, ոչ պատժելի է՝ այլ արգահատելի, որպէս թե առ ի չզոյէ կաթին յայն յաւժարեաց:

48 Նա եւ աւճն, որ է սատանայ, յիրաւի պատժեցաւ՝ վասն ընդ անագորոյն թշնամութեան ընդ մարդոյն ունելոյ:

Եւ արդ սկիզբն չարեաց գնա [50] խանձն ասենք, եւ գնախանձն յառաւել գմարդն պատուելոյ, եւ զչարիսն յանհնագանդութենէն: Չի Աստուած այնպէս առաւել գմարդն պատուեաց, եւ նորա անսաստեալ՝ զրնկէց զպատուիրանն: Ուստի զամենայն ինչ որ լինի չար, որ բնութեամբ չար գիտենք, այլ՝ զի առանց կամացն Աստուծոյ գործին՝ իրք ինչ լինին չար:

Նա եւ ընդ լինելն իսկ սատանայի յԱստուծոյ, զիտաց՝ եթե անսաստել ունեք Աստուծոյ՝ չար է եւ ոչ բարի. քանզի ոչ եթե անմիտ ինչ որ եղէւ նա յԱստուծոյ՝ եթե չգիտէր, եթե որ ինչ ըստ Աստուծոյ կամացն լինի՝ բարի, եւ որ ինչ արտաքոյ քան գնորա կամսն՝ այն չար է. եւ վասն

այնորիկ յիրաւի տանջէ գնա Աստուած. զի գիտէ զբարին, եւ ոչ առնէ, եւ հմուտ է չարին, եւ ոչ խորշի:

Եւ ոչ չար եւ չարչարիչ հաստատեաց գնա Աստուած. 209v եւ ոչ փորձիչ՝ եթե նովաւ փորձեալ զարդարս գտեսցէ. եւ ոչ ինքն յանձնէ չար [51] գտեալ, եւ ոչ անարար եւ հակառակ Աստուծոյ. այլ մտաւոր եղեալ յԱստուծոյ, եւ հմուտ գիտութեան՝ թե չար է հակառակ կալ Աստուծոյ հրամանին, եւ յայն գոր գիտէրն՝ թե չար է՝ յանդգնեցաւ, զանասատութենէն ասենք. եւ անաստութիւնն ոչ եթե անձնաւոր ինչ յառաջագիտ եհաս ի գիտութիւնն սատանայի, այլ իբրեւ զմի ինչ եղեալ ի դիպաց կամեցելոյն:

49 Նա եւ զմարդոյ յիրաւի, ասենք, կրել պատուհաս ընդ որոց գործիցէ. քանզի կամաւ երթայ յուսումն այնպիսի իրաց, յորոց յորժամ եւ կամիցի՝ եւ մեկնել կարող է. քանզի եւ կամելոյն եւ չկամելոյն ունի իշխանութիւն, զորոյ զհետ երթայ եւ կարելն գոր ինչ կամիցի առնել:

[ԺԳ]

Որովհետև, ասեն, չարեաց արարիչ զԱստուած չկամիք ասել, այլ ի մարդկանէ եղեալ թելադրութեամբ սատանայի, ի հնագանդելոցն նորա և ի խաբեցելոց: Եւ յիրաւի կրեն պատիժս, զի կարենին հատանել ընկենու ի [52] բաց գշարիսն, և ոչ 210r կամեցան:

Եւ արդ վասն նորին իսկ սատանայի հարցցուք. այնպիսի՞ արդևք արար զնա Աստուած եթէ ինքնին այնպիսի չէր՝ և յաժարեաց ի չարաբարել:

51 Եթէ այնպիսի արարեալ էր զնա Աստուծոյ, պատիժս ի նմանէ չէր պարտ պահանջել, զի պահեաց զպայման բնութեանն՝ յոր արարն զնա Աստուած. և որ ոք ոչ կամաւք ինչ գործէ, ընդ այնր պատիժ չպարտի կրել. բայց որ կամաւք կարող է գործել, և գործ ինչ յոռութեան գործիցէ, յիրաւի պատժի, զի ոչ եկաց յայնմ՝ զոր Աստուածն կամի. ապա եթէ յԱստուծոյ բարութեան եղև, և անձամբ յանձնէ դարձոյց զկամսն ի չար՝ հեռացուցեալ զինքն ի լաւէն, յիրաւի պահանջի ընդ որոց յանդգնեցան՝ պատիժս:

Չի զսատանայ մեք ոչ յԱստուծոյ սատանայ եղեալ գիտեմք. այլ զսատան անուն՝ վասն խոտորելոյն առ իւր անուն. քանզի սատանայ յԵբրայեցոյ և յԱսորոց [53] լեզուէ խոտորեալ թարգմանի:

Այլ զաւրութիւն իմն զգայուն լաւութեանց հաստատեցաւ յԱստուծոյ, 210v և ի թշնամութենէ ընդ մարդոյն ունելոյիւրոյն՝ կամաւք՝ եղև բանասարկու: Թողեալ զԱստուծոյ հպատակութիւն՝ սկսաւ անսաստել, և հակառակ կալ Աստուծոյ հրամանացն ուսուցանել մարդկան, և իբրև զապստամբ յետս կացեալ թիրեցաւ յԱստուծոյ: Եւ վկայէ բանիս աստուածական բարբառն, որ ապստամբ վիշապն կոչէ զնա՝ եթէ հրամանաւ սպան զապստամբ վիշապն: Եւ արդարև իսկ բանն Աստուած սպան զսատանայ, այնու զի կոխելոյն զնա ետ իշխանութիւն:

Արդ ապստամբ կոչէ զնա զիր: Եթէ նոյնպիսի՞ որպէս եղևն յԱստուծոյ՝ կացեալ էր, ապա ոչ ապստամբ կոչէր զնա: Չի որ ապստամբի որ, թողու զիւր պայմանն՝ որով ոչ անարար իսկ ցուցանի: Չի եթէ անարար էր, ապա ոչ յիւրմէ բնութենէն փոխէր. քանզի շմարթի բնութեան իմիք՝ առանց [54] կամաց՝ մերթ բարի լինել, մերթ չար:

[ԺԴ]

Իսկ արդ եթե ոչ անարար էր, ասեն, սատանայ, և ոչ այնպիսի եղեալ յԱստուծոյ, և անձամբ գանձն դարձոյց ի լաւ անտի ի յոռին, որ է ի հնագանդութենէ յ211րանհնագանդութիւն, արդ զայն ասացէք. գիտէ՞ր Աստուած եթե այնպէս լինելոց էր, թե չգիտէր. թե գիտէր և արար, ինքն է պատճառ՝ նորա ի լաւութեանցն դառնալոյ. ապա թե ոչ գիտէր, գիտէ՞րդ առնէր զայն գոր ոչն գիտէր՝ թե որպիսի ինչ ոք լինելոց իցէ:

Անգիտութիւն կարծել զԱստուծոյ՝ անհնարին յիմարութիւն է. քանզի միայն ինքն կանխագէտ է հանդերձելոց: Այլ քանզի բարերար էութիւն է Աստուած, ոչ կամեցաւ զագնուականութիւնն իւր ծածկել:

Վասն որոյ յառաջագոյն գիտէր զսատանայէ եթե թիրելոց է, և զմարդիկ յանցուցանելոց՝ առ ի չունկնդիր լինելոյ [55] հրամանաց նորա, որով միանգամայն՝ վասն անձնիշխանութեան մարդոյն երևելոյ արար զնա Աստուած, զի առաւելութիւն բարերարութեան նորա յայտնի լիցի մարդկան վասն թողութեան տալոյ մարդկան յառաջագոյն գործելոցն մեղաց: Չի յորժամ զսատանայ ամբարշտացեալ տեսանիցեն և չբարձեալ ի միջոյ, և վասն իրեանց մեղացն 211v իմանայցեն՝ թե գոյ հնար թողութեան ապաշխարութեամբ. զի Աստուծոյ բարերարութիւնն ցուցանիցի, և մարդիկ զշնորհն նորա գիտասցեն. զի եթե այն այնպէս չէր լեալ, և ոչ բարերարութեանն նորա ոք խելամուտ լինէր:

53 Եւ բնաւ իսկ, ասեն. յետ թիրելոյն սատանայի և խաբելոյ գնարդն՝ ընդէ՞ր իսկ ոչ եբարձ ի միջոյ, զի մի զբազումս սպանանիցէ:

54 Ոչ եթե չէր կարող Աստուած բառնալ զսատանայ ի միջոյ, քանզի չիք ամենկին տկարութիւն զԱստուծով. այլ զի չէր ինչ մեծ [56] գործ Աստուծոյ զսատանայ ինքնին անձամբ սպանանել, զարարած մի զիւր փոքր յոչինչ դարձուցանել, զի մի կարծիցի թե վասն շժուժալոյ շարութեանն նորա սպան զնա:

55 Երկրորդ անգամ՝ զի անծանաթ ևս լինէր առ յապայ մարդկան Աստուծոյ բարերարութիւնն, թե յառաջագոյն սպանեալ էր զսատանայ. զի ոչ ոք ունէր նշանակ ինչ յայտնի բարերար կոչելոյ զԱստուած: Այլ թերևս և կարծիք ինչ ի մէջ մտանեին՝ թե հաւասար ինչ ոք էր նա Աստուծոյ և աճապարեաց ի 212r միջոյ եբարձ:

56 Վասն որոյ պահեաց զնա, և ոչ կորոյս ի միջոյ, զի մարդիկ յորժամ լաւութեանցն հմուտ լինիցին, յաղթեցնեն նմա՝ փոխանակ այնոցիկ՝ որ յառաջնումն յաղթեցան ի նմանէ:

Այն իսկ մեծ և զարմանալի է, զի մարդն Աստուծոյ՝ վառեալ Աստուծոյ աւգնականութեամբ, պատերազմեալ յաղթիցէ սատանայի: Որպէս մարտուոյց ոք ամենայն հնարիք հնարեալ զիւր աշակերտ[57]սն թեքել, առ ի ցուցանելոյ զհանգամանս մարտիցն, որով մարթիցեն յաղթել ախոյանից, և առաքիցէ զնոսա ի հրահանգս մրցել ընդ ախոյանսն, և յաղթութեանցն ուշ առնել խրատիցէ, մինչև զկեանս անգամ արհամարհել. զի լաւ համարի թե վասն անուան բարիոք մեռանիցին, քան թե կենդանի կայցեն և վատանուն լինիցին. և նոցա զթելադրութիւնս վարդապետին ի մտի եղեալ, և զպարզևս ընդ յաղթութեանն զեր ի վերոյ լինիցին ախոյանին, և պսակեալ առ վարդապետին հասանիցեն, և նշանակ ճգնու212vթեան ընդ ախոյանին՝ առ նա զպսակն բերիցեն. ապա եթե զմարտուոյցն զմտաւ ոչ աժիցեն, և յաղթութեան և պսակի ոչ ցանկանայցեն, կործանին վատանուն յախոյանէ անտի. յիրաւի այնուհետև թշնամանին և տանջին, և մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրեն. նոյնպէս և զԱստուծոյ իմանալի է, թե իւրովք պատուիրանաւք [58] վառէ գեղեցիկ զմարդիկ՝ առ ի պսակելոյ զյաղթողն, և յամաթ առնելոյ զվատացեալն: Իսկ եթե ոք յոչինչ զԱստուծոյ զպատուիրանսն համարիցի, յորժամ մրցել ընդ բանասարկութիւն ռմարտնչիցիք վաղվաղակի կործանի, քանզի չունի զնշանակս յաղթութեանն. և յիրաւի կրէ պատիժս պատուիասից այնպիսին, զի ոչ նմանեաց ընկերին՝ որ կռուեցաւ և յաղթեաց:

Արդ վասն այնորիկ թողեալ է Աստուծոյ զսատանայ իբրև ի հրահանգս կռուանոցաց յաշխարհի, զի յորժամ իւր նահատակեալքն կռուիցին և յաղթիցեն նմա՝ պարծանք առաջնոյ

յաղթութեանն նորա քակեցին 213r յայժմուն այնպիսեացն մարդկանէ, որ լաութեանցն ցանկութեամբ պարտիցեն զնա, և նշան յաղթութեան զնահատակութեանն կանգնիցեն: Քանզի կոխան արկեալ ընդ ոտիւք մերովք՝ անկեալ դնի մեռեալ, և կործանի՝ առ ի լաութեանցն ցանկութեան մերոյ ի պարտութիւն մատնեալ:

[ԺԵ]

Արդ յետ այս ամենայնի հաւանութեանց՝ յամառեալ գնոյն ի մէջ բերեն. բնութեամբ են՝ ասեն՝ չարիք, և ոչ կամածինք:

58 Եթե բնութեամբ իցեն, ընդէ՞ր արեւնք ի թագաւորաց դնիցին, և սաստք յիշխանաց, և պատիժք ի դատաւորաց. ո՞չ ապաքէն վասն կարճելոյ չարեացն: Եթե բնութեամբ իցեն չարիքն՝ ոչ պարտի արեւնադիրն արեւնս դնել, և ոչ իշխանն պատիժս ի վերայ չարագործին ածել: Ընդէ՞ր պատժիցեն զայն՝ որ ոչ կամաւքն չար իցէ, որում արգահատելն պարտ էր, և ոչ պատիժս ի վերայ հասուցանել:

Եւ արդ այնպիսոյն եթե կին շնայցէ, չպարտի մեղադիր լինել. քանզի ոչ կամաւ՝ որպէս ասենն՝ յաւժարեցաւ ի չարն, 213v այլ բնութեամբ բռնադատեցաւ:

Եւ եթե որդոյ իւրոյ սուր առեալ՝ ի վերայ խաղայցէ, մի լիցի նմա մեղադիր. զի ոչ իւրով կամաւ երթայ, այլ չարն տանի գնա յայն:

Եւ եթե [60] ի դրացոյ և ի բարեկամէ թշնամանեցի՝ մի փոխարէն թշնամանեցէ, այլ առաւել արգահատեցէ ևս. զի ոչ եթե նա ինչ թշնամանէ, այլ չարն՝ որ բռնաբար վարէ գնա:

Նոյնպէս՝ յորժամ դուստր գնայր անարգիցէ, և նու գկեսուր իր, և կին զայր, և ծառայ զտէր, և եղբայր զեղբայր, մի ինչ տարցին ընդ միտ՝ որք անարգեցանն, այլ արգահատեցեն նոցա որպէս ի չարէն բռնադատելոց:

59 Իսկ եթե տեսանենք՝ եթե թագաւորն զիրոց արինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զվնասն կարճէ, և դատաւորն զգողն և զաւագակն պրկէ և քերէ՝ վասն զվնասակարութիւնն ի միջոյ բառնալոյ, և հայր գորդի դժնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ, և այլքն ամենեքեան իւրաքանչիւր զանցնիւր զանարգանաց վրէժս պահանջեն՝ կամ անձամբ կամ իշխան214րաւք, յայտ է՝ թե չարիքն որ գործին՝ կամածինք են և ոչ բնականք: Բայց աղէ՞ դու զ[61]կարին իսկ զոք շոայլեալ ցանկութեամբ՝ պրկեա և մտրակեա, տեսանէ՞ս թե բնաւ ամեննին գտանիցի ի նմա յիշատակ ցանկութեանն: Եւ արդարն ոչ ինչ ընդ վայր ասացեալ է բան Իմաստնոյն, թե ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս տան լսել նմա:

60 Նա և այլուստ ևս մարթեմք իմանալ. զի մարդոյ բնութիւն բարեաց ցանկացող է, և ոչ չարեաց: Չի շունն, որ շնայ, մինչ դեռ իսկ ի գործ շնութեանն իցէ՝ եթե շուն ոք կոչէ գնա, ընթոստանայ. և պոռնիկն, որ յայտնի պոռնկի, զանուն պոռնկութեանն չախորժէ լսել. նոյնպէս և գողն և աւագակն, և այլ ևս չարագործքն, թեպէտ և զգործ չարագործութեան գործեն՝ զանուն չարագործութեանն յանձն ոչ կամին առնուլ:

61 Նա և կեղծաւորն կեղծաւորեալ, որ մեղմելխանաւք ընկերին կամիցի վնաս առնել, թաքուցանէ զկեղծաւորութիւնն, և որպէս թե բարոյ ինչ 214v խրատ տայցէ՝ հրապուրեալ արկա[62]նէ ընդ վնասիւք զանմեղն. և եթե ոչ զբարոյ գդէնս զգեցեալ մեղմեղիցէ, չկարէ ըստերիւրել յիրաւանց զիրաւագէտն:

62 Նա և յորժամ զխիստ ոք իշխան կամիցի ի քաղցրութիւն ածել, չկարէ յայտ երթալ ասել՝ թե դու խիստ ես, այլ քաղցրախատն բանիւք մատուցեալ ողորքէ՝ թե դու, տէր, քաղցր ես և բարերար ամենեցուն, ամենեքին գոհ են զքէն, բոլորք առ իրաւագէտս ունին. և այնպէս կարէ մեղմով քաղցրացուցանել զխստութիւն իշխանին, և խոնարհեցուցանել ածել յիրաւն և յարժան:

Նոյնպէս և առ ցասուցեալն և տրտմեալն և առ նախանձոտն քաղցրութեամբ ոք մատչի և ցածուցանէ:

Եւ անտի յայտ է՝ թե բարեաց ցանկացող է բնութիւն մարդկան, և ոչ չարեաց:

63 Եւ եթե գագանացն գագանութիւն չար ինչ բնութեամբ կարծեցուցանիցէ նոցա, զիտասցեն՝ զի կէսքն յանասնոցն ի պէտս արարան, որպէս և արջառ և ոչխար և [63] ամենայն ինչ որ ուտելի է և կրելի է. և կէսքն վասն 215r երկիւղ ի միտս մարդկան ծնուցանելոյ: Չի թե գագանք ահագինք են, և վիշապք և աւձք և այլ ճճիք վնասակարք, և մարդն այնչափ հպարտացեալ է՝ մինչ ըստ Աստուծոյ երկիւղին սահմանս արտաքոյ ելեալ անսաստէ, եթե այնպիսի զարհուրեցուցիչք չեին՝ ո՞րչափ ևս առաւել չկայր երբեք յակաստանի:

64 Նա և նոքին իսկ, որ չարքն կարծին անմտաց, երբեք երբեք աւգտակարք լինին և գերծուցիչք ի մահուանէ: Չի՞նչ չար քան զաւօ կայցէ, և ի նմանէ թերիակէ. և ի սպանող դեղոց, որ ի նենգութենէ մարդկան կագմեցան, չն հասուցեալ, և անդէն բուժէ: Եթե բնութեամբ չար ինչ էր աւօ, կամ չարի իրիք արարած, ապա չգտանէր ինչ ամեննին ի նմա աւգտակար, և ոչ զգանանայր երբեք ի գագանութենէ անտի իրմէ. նա աւանիկ տեսանենք ի հնարագիտութենէ թովչաց զգանացեալ, իբրև գշուան [64] խաղալիկ է նոցա, և բագում անգամ բնակեալ ի տան՝ չմեղանչեն բնակչացն:

65 Եւ արդ եթե 215v հեթանոս իցէ՝ որ չար ինչ բնութեամբ կարծիցէ, յանդիմանեացի յիրոց արուեստակցացն յաւճապաշտացն. որ այնչափ զգանացուցանել զաւօս գիտեն, մինչև կոչել յութիւք ի տունս, և կերակուրս մատուցանել, որպէս Բաբելոնացիքն վիշապին՝ գոր պաշտեինն. և սպան գնա Աստուծոյ սիրելին՝ նովին ընտելական կերակրովն:

66 Եւ եթե մոգ իցէ, և չարի արարած զգագանսն վասն զագանութեանն ասիցէ, ի հասարակաց մտաց փաշաման կրեալ ըմբերանեացի: Չի եթե գագանքն չարի արարածք իցեն, և երկիր բարոյ, զհա՞րդ բարոյն արարած չարին արարածոց դայեակ մտեալ՝ սնուցիչ լինիցի, որք ի նմանէ կերակրին և ի ծոց նորա հանգչին. զի երկու հակառակք իրերաց՝ միմեանց ծախիչք են, որպէս խաւարի լոյս, և ջեր սառամանաց:

[65] Արդ եթե գագանք չարի արարածք եին, և երկիր բարոյ, ծախել պարտ էր գնուս երկրի՝ և ոչ սնուցանել, սպառել և ոչ սերել. ապա եթե երկիր և գագան 216rսն սնուցանէ և ոչ սպականէ, յայտ է՝ եթե յորմէ արարչէ երկիր լեալ է՝ ի նմանէ և գագանքն արարեալ են. և չիք ինչ չար բնութեամբ. քանզի չիք ոինչ չար արարիչ բնութեամբ: Եւ մանաւանդ թե և գագանք իսկ, գոր ասեն՝ թե ի չարէ արարչէ եղեալ են, ցուցանեն թե չեն ուստեք՝ այլ յերկրէ, այնու զի յերկրէ կերակրին և ի նմա բնակեն, և անդրէն ի նոյն շրջեալ հողանան:

67 Նա թե և ի չարէ ինչ եին չարք արարեալ, ոչ ինչ ի նոցանէ աւգտակար գտանէր, այլ ամեննին իսկ վնասակար: Իսկ արդ եթե տեսանենք, զի կիսոցն մորթքն պատսպարան մերկութեան մերոյ լինին՝ և կիսոցն ճրագուն դեղ նեղի, և այլ ինչ յանդամոցն, որպէս առիծուն և արջոյ և այլոցն՝ ըստ իւ[66]րաքանչիւր մի ըստ միոջէ, յայտ է՝ եթե ի բարոյ արարչէ լեալ են, վասն միոյ իրիք աւգտակարին գտանելոյ ի նոսա: Չի որ չար ինչ է, նորա ամենայնին վնասակար է, և մորթ և միս. այլ գնոցա որպէս գմորթն զգենումք, և ոչ վնասէ, և զմիսն 216v եթե սիրտ ուրուք առնոյր և ուտէր՝ ոչ վնասէր. որպէս վարագի՝ որ գագանագոյնն է քան զամենայն գագանս՝ ուտի միսն, և ոչ վնասէ. նոյնպէս և գնոցայն՝ եթե ուտէր որ՝ <չ>վնասէր:

Եւ յարջառ, գոր ասեն՝ եթե ի բարոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութիւն: Չցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթե զարիւնն որ ըմպիցէ՝ սատակի:

68 Նոյնպէս և ի բանջարս է ինչ՝ որ առանձինն սատակիչ է, և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի:

Չմանրագորն եթե լոկ որ ուտիցէ՝ սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնահատաց:

Եւ զհագար՝ եթե ի տաւթ ժամա[67]նակի ուտիցէ որ, քանզի զովացուցիչ է, գտապս ի փորոյն փարատէ. և եթե ի հով ժամանակի ուտիցէ որ, վնասէ. և եթե զջորն քանեալ անապակ ըմպիցէ որ, սատակի. և եթե զսերմնն աղացեալ՝ ջրով ըմպիցէ, ի ցանկութենէ արկանէ:

Եւ կանեփուկն թուփ ինչ է, որոյ սերմն նորա դեղ է և նոյն դ217րարձեալ կասեցուցիչ ցանկութեան:

Եւ մոլախինտոյ, որ առանձինն ի յայտնի ինչ ժամանակի սպանող է, նովիմբ գնաղօս հնացեալս հնարին բժիշկք հատանել:

Եւ կաղանչանան ազգ ինչ՝ առանձինն սպանող է, և խառնեալ ընդ այլ դեղս մաղձաղեղ է բուժիչ ի մահուանէ:

69 Արդ յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթե չար ինչ բնութեամբ իցէ. բայց Աստուած այսպէս իմաստուն գմարդն կագմեաց, զի և ի դարմանիչսն մարթիցէ վայելել. և որ վնասակարքն կարծիցին, և անտի ևս հնարիւք աւգտակարութիւնս [68] կարիցէ գտանել, առ ի յանդիմանելոյ զբարս անմտացն թե չիք ինչ որ բնութեամբ չար է:

[ԺՁ]

Բայց թեպէտ և նոքա աստուածական արինաց ոչ հաւատան, մեք յուղորդ պատասխանոյ գներ ընտանիս մի գրկեսցոյք:

Այնչափ ինչ չար ի գագանացն բնութեամբ ոչ գոյր, մինչև ամեալ գնորարարսն առ նորաստեղծն՝ նմա նոցա անուանս հրամայէր դնել. և եթե մատ ոչ գային, գիա՞րդ 217v միոյ միոյ ըստ իւրաքանչիւր ազգաց անուանս յարինէր. ապա եթե մատ գային, և ընտելութիւն ընդ մարդոյն ունեին, յայտ է՝ թե ոչ չարք եին, և ոչ մարդոյն վնասակարք. այլ յետ անցանելոյ մարդոյն զԱստուծոյ պատուիրանաւն՝ տուան նմա զարհուրեցուցիչք, առ ի չհպարտանալոյ հողեղինին՝ որ ի հողոյ եղև, և ի հող դառնալոց էր:

Եւ առաջնոց չվնասակարութեան գագանացն մարդոյ այժմու համբոյրս և ընտելութիւնս վկայեն:

Չի ոմն գգայոյ յկորինսք սնու[69]ցանէ, և իբրև գշան կորինս՝ առ ընտելութեան ընդ անձն անկանին:

Եւ միւսոյն զառիծու կորին սնուցեալ՝ ամէ ի համբոյր և ի քծինս, մինչև պատել զսնուցանելեան. և եթե այլ ոք ի նա հուպ գայցէ, չմոռացեալ զբարս գագանութեանն՝ ի վերայ յարձակի. և նորա սաստեալ գագանին իբրև շան, ցածուցանէ յանսաստ գագանութենէն:

Եւ այլոյ զարջոյ յոթիւնսք սնուցեալ՝ կաքաւիչս ուսուցանէ, և նմանեցուցեալ բարուց մար218րդկան՝ զգագանաբարոյն ցածուցանէ:

Եւ այլոց զկապիկս անապատականս ըմբռնեալս՝ հտպիտս և ընչապտուկս և ամենաչար ուսուցանեն:

Եւ այլոց զքարբս յիգակերսք կալեալ՝ թովչութեամբք յընտելութիւն մարդկան ամեն, ջրեցուցեալ գրոյնսն սպանողս:

Արդ եթե չար ինչ եին գագանքն բնութեամբ, չէր հնար վնասակարացն ընդ իրեանց վնասակարին ընտելութիւն ունել:

71 Եւ թե զխորշակս և զսառամանիս ի [70] վնասակարութեանն ի չարէ արարչէ կարծիցեն, զհտասցեն. եթե ոչ ձիւն և սառամանիք պնդեին զլերինս, արմատք խոտոց ոչ պարարեին. և եթե ոչ տաւթ ջեռուցանէր զանդաստանս, պտուղք ոչ հասանեին:

[ԺԷ]

Եւ եթե գախտս և գհիւանդութիւնս և գմահս տարաժամս, և գքնաւ գմահ իսկ ի չարէ ինչ արարչէ իմանայցեն:

73 Եթե աստուածական արինաց հաւատային՝ անդստին յարինացն առնեաք պատասխանի:

Բայց որովհետև ի չարէ արարչէ դնեն գայսպիսի անհարթութիւնս, հա218vրցցուք և մեք գնոսա. բարեացն արարիչ և չարեաց՝ ո՞քան գո՞հարուստ իցեն:

Եթե ասիցեն՝ եթե բարեացն արարիչ հարուստ է, ստեն: Չի եթե հարուստ որ էր նա քան գչարեացն արարիչ, ոչ տայր նմա գվնասակարութիւնսն յիւր ի բարի արարածսն արկանել: Նա և տեղի ևս չէր պարտ տալ նմա յիւրումն վայրսն: Չի եթե կարող որ ինչ [71] էր, նախ իւր տեղիս գատ ի նմանէ առնէր, և ապա արարածս՝ գինչ և կարող էր առնել:

74 Արդ գայն ասացեն. կարո՞ղ էր գնա մերժել բարին յիւրոց ի բարիոք արարածոցն, եթե չէր կարող:

75 Եթե ասիցեն՝ եթե կարող էր, լուիցեն: Եթե կարող էր մերժել գչարն և ոչ մերժեաց, ինքն է պատճառ վնասուն:

Եւ եթե ոչ էր կարող մերժելոյ գչարն, գտանի՞ գի հարստագոյն քան գնա էր չարն, որ բռնաբար նեղէ և ապականէ գբարիոք արարածս նորա:

Դարձեալ և այն ևս սուտ է, գոր ասենն, թե ի վախճանի յաղթե նմա բարին. գի որ յառաջնումն չկարաց յաղթել, յայտ է՝ 219r թե և ի վախճանի չկարէ յաղթել:

76 Այլ մեք գցաւոց և գմահուան բագում ինչ պատճառս ունինք ճշմարիտ բանիս ի մէջ բերել:

77 Նախ այն իսկ՝ գի յորժամ մարդն գԱստուծոյ պատուիրանան անց, ապա եղև ընդ ցաւովք և ընդ մահուամբ: Քանգի ցկինն ասաց՝ թե [72] ցաւովք և տրտնութեամբ որդիս ծնջիր. և ցայրն՝ թե աշխատութեամբ և քրտամբք երեսաց քոց կերիցես գհաց քո, մինչև լիցի քեզ դարձ անդրէն յերկիր՝ ուստի առար. գի հող եիր, և ի հող դարձջիր: Որով յայտ է, գի թեպէտ և բնութիւն մարդոյ՝ քանգի մարմնապատ է՝ ընդ ցաւովք և ընդ մահուամբ կարծէր, այլ թե կացեալ էր ի պատուիրանին՝ պահէր գնա կենդանարարն կենդանի. որ յոչնչէն կարող եղև գշունչ մարդոյն առնել, և պահէ միշտ կենդանի և անմահ, նոյն և գմարմինն՝ գոր յերկրէ ստեղծ՝ կարող էր պահել կենդանի:

[ԺԸ]

Այլ իբրև գայս լսեն թշնամիք ճշմարտութեանն, ազգի ազգի գինուք վառին ընդ 219-դէմ ստուգութեանն:

Ջի կէսքն ասեն՝ թե չէր մարթ մարմնատրի անմահ կալ:

Եւ այլքն ասեն, վասն զի ոչ տուէր մարմինն ընդ շնչոյն յերկար ժամանակս կեալ, հարկ է անտեսականին մեռանել:

79 [73] Այլ գառաջինսն յանդիմանեն Եդիս և Ենոք, որ ցայժմ կենդանի են. և գայլսն՝ հասարակաց համարէնն յարութիւն: Ջի եթե այժմ վասն զի անտեսական են մարմինք՝ յայն սակս մեռանին, ապա և ի յարութեան՝ ըստ նոցա բանին՝ չտոկան ընդ շնչոյն: Եւ այսու յայտ առնեն՝ թե գյարութիւնն իսկ մարմնոյ խափանել կամին, ուր աստուածական գիրք և արարածոց բնութիւնք անդադար վկայեն գյարութենէ մեռելոց:

80 Այլ ասեն. թե ոչ մահկանացու իսկ էր մարմին, զի ա՞րդ էր՝ զի վասն դոյզն յանցմանն անկանէր ընդ մահուամբ, և ոչ արգահատէր նմա արարիչն և ներէր յանցմանն:

81 Ջի ներող և արգահատող է արարիչն, այն ամենեցուն իսկ յայտնի է. և առաւել յայնմանէ, զի յետ յանցանելոյ մարդոյն՝ իջեալ անմարմինն՝ իբրև գմարմնատր որ ռոնաձայն առ 220-րնէր ի դրախտին. և մեղմով և աղերսալից բարբառով ասէր ցյանցուցեալն՝ ո՞ր ես Ա.[74]դամ, զի մի տագնապեցուցեալ՝ չտայցէ ուշաբերել նմա ապաշխարութեան: Եւ զի չեկն ի գոշումն յանցուցեալն, յիրաւի կրեաց պատիժ գնահ:

82 Դարձեալ և այլազգ ևս. զի իւրոյ արարչին յառաջագոյն պատուիրեալ էր նմա՝ թե յորում ատուր ուտես ի պտղոյ ծառոյն, ի նմին մեռանիս: Եւ թշնամին յետոյ եկեալ ասէր՝ ոչ մեռանիս, այլ իբրև գաստուածս լինիս:

Եւ արդ ո՞ր բանից պարտ էր հաստատուն լինել, ա՞յնր՝ որ յառաջագոյն զգուշացոյց, և կամէր ունկնդրութեամբ պատուիրանին գնա անմահ պահել, եթե միւսոյն՝ որ պատրանաւք ջանայր գնա մահկանացու առնել:

83 Եւ եթե չէր արարչին յետ յանցանելոյ զպատուիրանան գմարդն մահկանացու արարեալ, հանապազ մարդն սատանայի հաւատայր, և ոչ Աստուծոյ, զի սա ասաց՝ թե ուտես ի պտղոյն, մեռանիս. և նա ասէր՝ թե ուտես, չմեռանիս, այլ իբրև գաստուածս լինիս: [75] Արդ եղ 220-ն մահ ի վերայ բնութեան մարդկան արարիչ բնութեանն, զի իւր բանն հաստատեցի, և չար խրատտուն պարտաւորեալ գտանիցի. զի թեպէտ առ ժամանակ մի վասն այսց երկուց պատճառանաց ընդ մահուամբ անկանիցի, այլ, ըստ իւրում կարողութեան, յարուցէ միւսանգամ, և յանսպառ յաւիտեանս կենդանի և անմահ պահեսցէ: Եւ որ գիրեշտակս և գիոգիս մարդկան յոչնչէ արարեալ՝ կենդանիս և անմահս պահէ, նոյն և գմարմինս կարող էր կենդանի պահել՝ թե չէր առաջնոյ մարդոյն զԱստուծոյ հրամանն զընկեցեալ:

[ԺԹ]

Այլ զի Աստուած մահուան չէ պատճառ, վկայեսցէ ամենարուեստ իմաստունն, որ ասէ՝ եթե Աստուած զմահ ոչ արար, և ոչ խնդայ ընդ կորուստ մարդկան. այլ հաստատեսց Աստուած զմարդն յանեղծութիւն ոպատկերք իւրոյ մշտնջենաւորութեանն, և նախանձու բանսարկուիւն եմուտ մահ յաշխարհ:

85 Եւ դարձեալ [76] ինքն իսկ ասէ. ես ասացի՝ թե աստուածք իցէք, և որդիք բարձրելոյ ամենեքին: Այս ինքն՝ եթե ես զձեզ անմահս արարի, 221r եթե կացեալ էիք յիմում հրամանին. բայց որովհետև ոչ կացէք յիմում պատուիրանին, դուք իբրև զմարդիկ մեռանիք, իբրև զմի յիշխանաց անկանիք. ես ոչ ընդ ձեր մահ կամեի, և ոչ ընդ իշխանին վատ խրատտուիւն անկանել:

86 Այլ բնաւ իսկ, ասեն, ընդէ՞ր եմոյժ զնոսա ի կոիս ընդ միմեանս:

87 Այսու զանձնիշխանութիւնն սատանայի և զմարդոյն կամին խափանել: Չի Աստուած՝ որ աննախանձն արար զնոսա անձնիշխանս, ոչ կամէր թե որպէս զանասունս ի հարկէ վարիցին: Եւ ապա անձնիշխանութիւնն այնուիտև չլինէր անձնիշխանութիւն:

88 Բայց Աստուած թեպէտ և ունէր իշխանութիւն ոգիւրոցք ռարարածոցնք զհանդէսն տեսանել, այլ ոչ ինքն դրդեաց զնոսա անկանել ընդ միմեանս:

Իբրև ետես զսատանայ [77] նախանձու բորբոքեալ, թոյլ ետ անձնիշխանին ընդ անձնիշխանին ոգորել. քանզի գիտէր՝ եթե ոչ ինչ տկարագոյն է սորա անձնիշխանութիւնս քան զնորայն.

և ոչ նա կանխագէտ, և սա ոչ կանխագէտ.

221v և ոչ նա բռնաւոր, և սա տկար ոք:

Եւ զի չէր բռնաւոր ոք, յայնմանէ յայտ է՝ զի ցկինն պատրանաւք մատուցեալ հարցանէր, և ոչ բռնութեամբ զարհուրեցուցանէր:

Եւ զի չէր կանխագէտ, ասէ. զի՞նչ է այդ՝ զոր ասաց Աստուած, զի ի նմանէն ուցի զհանգամանսն:

89 Դարձեալ և ի Յոբայ փորձանացն է ուսանել՝ թե չէ սատանայ բռնաւոր և կանխագէտ:

Չի եթե բռնաւոր ոք ինչ էր նա, ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր աւճան և ապա մխէր ի փորձութիւնսն:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.